

եւ այս երկուքն «Եղիային եւ Մովսիսին»  
կը կոչէ (Քրգ. ձմր. 484), իբր յիշատակ  
երկու մարգարէից պահեցողութեան:

Բ. Ասոնց ու զատկականին պահպա-  
նութեան եղանակին մէջ զգալի տարբե-  
րութիւն մը չենք գտներ ոմանց քով: Ա-  
լաւկայ որդին երեք պահոց մէջ եւս կ'ար-  
գելու միան ու զինին, եւ կը խրատէ պա-  
տուել զանոնք «ծումաչան պահիւր» (ՂԱ):  
Աւելին կայ. ՅՏ. Տաւուշեցին «զերիս յիս-  
նակսն աւնաց եւ աւչոշր կատարէր», կ'ըսէ  
Վարդան (154). այս ինքն բոլորովին ծոմ,  
որոյ սակաւագիւտ օրինակները տեսանք  
եւ այլուր (աստ, 411): Բայց ժուժկալու-  
թեան այս ձեւը կամաւոր էր եւ անհա-  
տական. այնպէս որ Վիլլերրանդ 1212ին  
տեսեր է Հայոց Ծննդեան պահքը՝ «հրա-  
ժարելով ձկէ, զինիէ եւ ձիթէ» միայն  
(Յուշ. Ա. 117). այս ինքն խիստ պահք  
առանց ծոմի: Այս պնդութեան համար  
երբեմն «աւռան աղուհացք» ալ կոչուած  
է (Ուռ. 372, 544):

Սակայն հասարակաց կամ ազգին մե-  
ծամասնութեան համար եւ կամ գէթ ա-  
մէն ժամանակ այս երկու քառասնորդք  
զատկականին չափ խիստ չէին: Այս պատ-  
ճառաւ Յովհ. Եզնկացին սովորական չո-  
րեքշարաթը կամ ուրբաթը լուծողաց կը